

ՆԱՄԱԿ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒՈՏ ՊԱՏՐԻԱՐԺԵՆ

ԱՌ ԿԱՐԴԻՆԱԼ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ՊԵԼԼՈՒԿԱ, Ի ՀՌՈՍ
գրուած Կ. Պոլսէն, 1738ի Դեկտեմբեր 4ին

Archivio di Propaganda Fide, Roma
Scritture riferite nei Congressi, 1775-1777,
vol. 18, f. 145r e 145v (agg. foglietto n° 155)

Է

(145r) Ամենապայծառազունեղի եւ քրիստոսակիր անձին, վեհա-
լուստեր իշխանի Սրբոյ Եկեղեցւոյ Հոռոմէականի Տեառն Տեառն Պէ-
լուկաս Լուսովիկոս բարձրապատիւ եւ ճոխափառ Քարտիմալի, պաշ-
տօնակցի մերոյ ի Քրիստոս, յոյժ կարօտիւ եւ խանթակաթ սիրով՝
փրկչաւանդ ողջոյն նուիրեմ, ողջ կելոյդ միշտ տարփալով, եւ ի
պարծանս իմ ողջ լեր ասեմ, ուլ Ամենաբարեպաշտ Տէր*:

Արդարեւ ոչինչ հրաշափառագոյն ինձ ի ներկայս եւ առ ասլայ
երեւի խնդիրն ամենախորժելի արքայածնին եւ արքային մեծին Սա-
ղոմօնի, որ խնդրեաց զատուածահաճոյնն խնդիր յամենաբարձրե-
ւոյ թագաւորէն, զգաւատատանակիւնին ասեմ իրաւանց զգօնութիւն,
եւ օ՛ն անդր, առաւել քան զոր խնդրէրն ընկալաւ: Այլ սքանչելա-
տեսիլ որ առ ինեւս փայլեցաւ ի քումմէ Գերամբարձութենէ, որ է իս-
կապէս եւ համարիմ գոթ իբր զմինն ի յեթեանց հրաշից գործեցելոց
ի կենցաղումս: Որպէս յոգնաթիւ ամանակօք հայցեալ եւ ընկալեալ
չնորհն իցէ առաւելապէս սիրելի, ըղձալի եւ տարփալի (եւ այն զի
երբեմն յամեցուցանի ի պարզեւողէն, զի նազելի երեւեացի), բայց
ոչ խնդրեալն իմ, եւ ոչ ի միտն իմ անկեալ չնորհն՝ զոր արարեր
նուաստագունեղի եղբօրս քոյ՝ է արդարեւ հիացման արժանի, եւ թէ
փոխարէն զի՞նչ հատուցից՝ անգիտանամ, թէպէտ ճանաչեմ զի չը-
նորհ ասի՝ վասն զփոխարէն ոչ անդրէն պահանջելոյ:

* Ընդգծեալ մասերը բնագրին մէջ կարծիք մեկնով գրուած են:

Թողում ասել զպարտականութենէս, որ հատուցումն է անկա-
րելի, այլ զի գերահրաշ առաւել քան զոր ասացին է այնպիսեօք պար-
զեւատրել, որ ընդունողին քան զարքունական ծիրանիս, եւ քան զակ-
նաճոխ պաակս է ախորժելի համարեցեալ, զփրկութեան մերոյ ա-
սեմ երկրորդ պատճառի, զբոլորի աշխարհի Արփւոյն լուսատուի (որ
էր գործի մերոյս փրկութեան, եւ յարմար ենթակայ աստուածայնոց
հրաշակերտութեանց), զՊատկերն գեղեցկանկար արժանի այնպիս-
ւոյ սրբոյ բոլորի աշխարհի հիացարանի, որոյ հրաշափառութեանն
վկայք են շուրջ զնովաւ նկարեալ քստմենելի եւ անտանելի չարչարա-
նացն տպաւորութիւնք, որք իբր զոսկեայ օղամանեակս շուրջ զարե-
գակամբ պար առեալք՝ փառաց պարառեցելոյն լինին գուշակիչք,
որք ի յելլադացւոց հալօն առձայնին, եւ ի մէջն բակ արեգակնան
մակադրին:

Այլ յաւելեալ ի վերայ այսոցիկ՝ զարմանասքանչ ցուցեր զտար-
փումն սիրոյ արտիդ սենեկի (Չերմադոյն քան զարեգական եւ լու-
սասփիւռ քան զչքնաղափայլութիւն նորին) առ իս, եւ եղեւ այն ինձ
կարի ընդարմացուցիչ: Քանզի նկատեալ յիս ինքնս՝ ոչինչ զայնպիսի
գտի արժանի առնօղ այնպիսւոյ սիրոյ, բայց ոչ զարմանամ, զի լատ
քոյոյ գերամբարձութեանդ ցուցեր առ իս զչնորհ, յատուկ գոլով
քոյապիսեաց այնպիսեօք պարզեւատրել սիրով, որոյ փոխարէնն իցէ
անկարելի:

Շարայարել բաղձամ աստէն, եւ վասն սոսկալի հրամանի գեր-
ամբարձութեանդ, որ ոչ միայն զանդրադարձ (իբր աստուածային
պատգամաց) գրոյդ պահանջեցեր, այլ եւ յԱնմատչելին Սինա ան-
արժան անձամբք հպել քարտիղիւ հարկեցեր, իցէ թէ այնու դիտ-
մամբ իբր թէ փոխանակ իմ՝ գիրն իմ զԱրքագնակատար նորին Ազն
համբարիցէ, զԱրքագնին ասեմ Մեծի Քահանայապետին երկրորդ
Մելքիսեդեկի. բայց կարէր մտաբերել քոյդ Գերամբարձութիւն ըղ-
զելն իմ առ այն պատասխան՝ թէ չեմ բաւական, ըստ ձայնի հա-
րիւրապետին, եւ մանաւանդ զի, օ՛ն անդր, քան զկարն իմ հրամա-
յեցեր: Եւ այն զի զԳերագանցազունեղ եղբայրութիւնդ եւ Տէրու-
թիւնդ ունելով առաջի նորին եօթնաջահեան աշտանակ լուսալիւր եւ
պատրաստ առ ի վասն փոխաբերաբար համբուրօղ Արքագնակատար
նորին Ազն. մեծ իմն պակասութիւն թուիւր անչնչական քարտիղիւ
առ Գաղաթն Եկեղեցւոյ ներհպել: Միայն զի բաւական միջնորդ ինձ
եղիցի եղբայրութիւնդ, առ ի ժառանգեցուցանել զհայրականն նո-
րին օրհնութիւն եւ Առաքելական աղօթք:

Ճոխացուցեր ասեմ զչքնաղապեղ պարզեւ (Արքագանին պատկերի
եւ չնորհածիւր պատգամահանգոյն մատենի գրոյդ) եւ պատուակա-
նութեամբ նոցին բերողի՝ իբր արժանաւոր մեծութեանդ դեսպանի,

թէպէտ եւ անարժանի առ որ առաքեցան, Սրբազանի Մեծի եղբոր մերոյ ասեմ Պաշտօնակցի՝ Տեառն Ֆռանչիսկօ Ճէրուլամօ Պօմա Կար-բազիմոյ Արք եպիսկոպոսի, որ արդարեւ արժանաւոր ծառայ Ձե-րումդ Տէրութեան, քանզի յառաքինութեան անսպակաս, յիմաստու-թեան ներհուն, ի սիրելութեան անկեղծ, եւ ի բարոյական քաղաքա-կանութեան անհամեմատ, որ զասացեալս (եւ մանաւանդ զանխար-դախ սէրն) բազմիցս վայելեալ եմ, վայելեմ եւ ալն ունիմ միշտ վայելել:

Ծանեայ ասեմ զԱմենապատուական իշխան ի ձեռն գրոյդ (նախ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ զեղեցկութիւն), եւ ի կողմանէ ոմանց առաջարկութեանց պատկանեցելոց շուրջ տկարծեօք մերոյս Հաւատոյ, վասն Փրկչին մերոյ Մարգեղութեանն: Որ թէպէտ եւ ընդարձակ խնդրէր խնդիր Տէրութեանդ զպատասխանի, բայց չի մի՛ յանդիմանի երեւիցեալ առաջի ամենաիմաստիդ եւ իբր ոչ գիտողի կամեցեալ զգացուցանել, վասն այնորիկ յուշ առնեմք իբր Սահակայ առ Աբրա-համ վասն ոչխարին ողջակիզելոյ ի միտ Տէրութեանդ ձգել ախորժե-լով թէ յոմանս Սրբազան Ժողովս, որք եղեն յարեւելս ի Տանն Կիլի-կեցւոց, ի հարցանելն առաքելական նուիրակաց ձերոց եւ Հարցն Յունաց թէ զի՛նչ զգայր արդեօք ազգն Հայոց վասն անճառ միաւո-րութեան Բանին մարմնացելոյ: Եւ ի պատասխանելն նախնեաց մե-րոց թէ Եկեղեցին Հայոց Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ խոստովանի զՄիածինն Աստուծոյ Հօր, զմարմնացեալն յօգոստափառ Սրբուհոյ Աստուածածնէն, եւ զայն ոչ թարց քանաւոր պատճառի, կամելով խոյս տալ յերկուց հերետիկոսադիսաց, յԱրիոսէ եւ յԵւ-տիքեայ: Ընդդէմ Արիոսի՝ կատարեալ Աստուած ասելով, եւ ընդդէմ Եւտիքեայ՝ Մարդ կատարեալ, զմի եւ զնոյն Անձն Բանին Աստուծոյ մարմնացելոյ: Բաւական հարցման իւրեանց լուծումն վարկանէին զասացեալս: Եւ ոմանք եւս ի մերոց Հարց առ ի մէնջ ոմանց ընդ-դիմացողաց զայս պատասխան տալին յասելն. զի՛նչ իցէ ասելն ըզ-Քրիստոս, Աստուած եւ մարդ կատարեալ, եթէ ոչ երկու բնութիւն. զի թէ եւ մի բնութիւն ասի ի մերոց, ուսեալ ի հնադոյն Հարց, այլ ոչ չփոթմամբ եւ կորուսմամբ, եւ ոչ ըստ տեսակարար միութեան, այլ ըստ անճառ միաւորութեան: Որոց հոլովից կարծիքն երեւի փո-խանակ ասելոյ Մի անձն, ասացեալ զու Մի բնութիւն, որովհետեւ ի նախնի Հարսն ոչ էր այնքան յայտնի ծանօթութիւն տարբերութեան Անձին եւ Բնութեան, ապա թէ ոչ՝ զիա՞րդ կարէր մերս Եկեղեցի ի դաւանութեանն իւրում երդել Աստուածն Մարդացեալ, առանց փո-փոխման, առանց այլայլութեան, որ բաւական հերքումն է չարա-խոհութեանն Եւտիքեայ: Կարծեմ թէ եւ քոյդ փրկաւէտ հարցման իցէ զրեցեալս բաւական պատասխան, եւ ըստ Սրբազանիցն այնոցիկ

արեւելեան Ժողովոցն Հարց խուզման, քումդ Գերամբարձութեան իցէ այս լուծումն հարցման:

Իսկ եւ առ այն, զոր ի միաբանութիւն զԵկեղեցիս Հայոց ընդ Սրբոյ եւ Մեծի Եկեղեցւոյդ Հօմայ հրաւիրեալն էիր: Ասեմ թէ զիա՞րդ իցէ բաժանեալ. աակայն բարեւոք և օգտակարաբար հրամայե-ցեր: Քանզի հաւատամ թէ ի փրկաւէտ մասունս հաւատոյ ամենայնիւ համաձայն է Եկեղեցիս Հայոց, բացի յոմանց աւանդութեանց եւ ա-րարողութեանց անլնասից փրկութեան: Եւ զայն քաջ գիտեմ, զի ներէ այնպիսեաց ձերդ Գերամբարձութիւն եւ բարեմտութիւն: (145v) Քանզի այնպիսի անանգոսնելի տարածայնութիւնք եւ ի մէջ առա-քելականացն խմբից երբեմնապէս ստեղծեցան, եւ մինչ ցարդ ոչ պա-կասեն և զանազանութիւնք վարծեաց, որովք անլնաս վիճամամբ ման-կունքն Եկեղեցւոյ ներկրթին, բայց մայրն բարեխոհ զգանազանու-թիւնն կարծեաց (որ ի մէջ ոմանց կարդաց) ի բարի կողմն թարգ-մանէ. աղաչեմք եւ զմտերիմ Որդիդ Սրբոյ Եկեղեցւոյ, եւ զմերն այնպէս թարգմանել, ըստ որում արանց բարեմտից է զամենայն ինչ ըստ իւրեանց բարեմտութեանն թարգմանել, եւ այն զի զերկրայա-կանսն ի բարի կողմն է առաւել վճռահատելի. եւ քանզի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարզեւք կատարեալք ի վերուստ են ի-ջեալք, վասն այնորիկ անկեալ յերկիր խոնարհաբար առաջի մեծի ատենին Աստուծոյ՝ աղերսելի է ի նմանէ, զի թերեւս ծաւալմամբ պարզեւաց նորին ի յընդհանուրս տարածեցի բարեհաճութիւն կա-մաց իւրոց:

Իսկ որ միանգամ իբր խորհրդատու ունել զՊաշտօնակից եղբայրն մեր զԱրքեպիսկոպոսն Կարթաղինոյ, եւ կամ գրգռաւն այնուիկ ի ներկրթել հրաւիրեցեր, կարծեմ թէ Գերամբարձութիւնդ ոչ այնքան նուազ ի Սրբազանից զրեանց եւ ի տգացմանց նոցին վարծէ զազա-Հայոց: Բայց զի մի՛ անգոսնել զհրաման Գերամբարձութեանդ երե-ւիցիմ, ընկալաց իբր զկրկին պարզեւ, եւ պսակ ի վերայ պսակի, եւ սիրատարի բարեկամութիւնն իմ, օ՛ն անդր, առաւել յաճախեցի ընդ Արքեպիսկոպոսին ձերոյ սիրազուն եղբոր մերոյ, որպէս եւ նա ունի առ մեզ:

Ներփակեմ աստէն իբր կնիք, ոչ կամելով զճրագ ընդ գրուանաւ թագուցանել, եւ ոչ զարեգակն ամպով ծածկել, զիմոյն ասեմ զՏեառն պատուականութիւն, որոյ չքեղաշուք բարեպաշտութեանն համբաւ յԱրեւելից ի յԱրեւմտադ փայլելով՝ արարեալ է զինքն արժանի յիշ-ման առաջի ձերումդ Գերամբարձութեան, զՔրիստոնէագումնդ կայ-սերն Կալիպաղոց՝ զԾայրագոյն դեսպանին ասեմ Ամենաբարեպաշ-տութիւն, որ արդարեւ արժանաւոր իշխան այնպիսւոյ Քրիստոնէա-գումնդի Կայսեր, հոգեւորապէս զեղբայրացելոյն իմոյ ասեմ երջան-գումնդի Կայսեր, հոգեւորապէս զեղբայրացելոյն իմոյ ասեմ երջան-գումնդի Կայսեր, որ ըստ արդեանց յիրաւի Հրեշտակ անուանեալ Տէրն

իմ Լուսովիֆո Սալվաթորու Տէ վիլանովայի, զոր գրէ թէ՛ Ո՛վ ամենապատուական իշխան կարէ ասիլ արժանապէս պսակ անարժան գըլխոյս, եւ պարծանք Քրիստոնէագումնեղին թագաւորութեան որոյ ամենապայծառ անուանն է բարեհամբաւութեան առիթ, եւ ի ստրկագոյն ազգէս մերմէ օրհնութեան եւ աղօթից առ նորայն թագաւորութիւնս եւ խնամարկութիւնս առնէ աղքատ աղին մերոյ, ի վերնում գաւառին ակն ունիմ զի տեսանելոց ես յարդեանց նորին եւ յընկալեալ պսակաց: Մանաւանդ զի անբուժելի վիրաց մերոց (ի խայթեցմանէ վաղենախանձ եւ ինքնահաւան ազգին Յունաց) հանդերձեալ է սպեղանի դնել եւ պատանս հնարել, զոր եւ ակն ունիմք թէ մինչ ի կատարած աշխարհի օրհնաբանիչ ինքեան եւ աղօթող զազգս մեր ստանալոց է եւ պարտական առնելոց. քանզի եւ ձեռնարկեալն (որ ակն ունիմք ի շնորհս Սրբոյ Հոգւոյն Աստուծոյ՝ թէ ի մերձակայս աւարտ առնելոց է) քի արդարեւ (եթէ ոչ իցէ յանդգնութիւն ասելս) մշտնջենաւոր, որոյ անուանն մշտնջենաւոր յիշատակ գոյ հաւատամք: Որ թէ զներելոյ գիտէի եւ զպատշաճ գոյն ճանաչէի, աղաչէի զԵղբայրդ իմ գրել Ամենաբարեպաշտ, եւ Քրիստոսասէր թագաւորին, շնորհել զԵղբայրն իմ ըստ հոգւոյ բազում եւս ժամանակ ի շնորհս Աղգիս Հայոց: Որոյ ամենաթաղաւորն Աստուած տացէ զկեանս երկարս հանդերձ Ամենաբարեպաշտուհեան իւրով եւ ծաղկեցեալ բարեպաշտ զաւակօքն. Ամէն:

Մնամ Պատրաստական Ծառայ յԱմենայնի,
Յօհաննէս իբրու Արք Եպիսկոպոս
եւ Պատրիարք նորոյս Հոսմայ արամեան
Տոհմիս Քրիստոնէից

ժ

(Կնիք)

Ոչ եթէ հաւասար Գերամբարձութեանդ,
եւ ոչ եթէ հաւասար յգեալ ընծայիդ,
այլ ըստ իմումս նուաստութեան, եւ որ
իմչ աստ ազնիւ թուի, ի վայելումս
Սրբութեանդ, կարմրագոյն գաղատական
ցփսի իմն ընդունիլ սիրով՝ աղաչեմ:

Ի Կոստանդնու Պօլիս,
յԱմի Տեառն 1738
Դեկտեմբերի 4

Սոյն նամակին կից՝ կը գտնենք պատառիկ մը, որ կը կրէ թիւ 155, հետեւեալ գրութեամբ.

Եւ քանզի հետազօտեալ ի սէր սրտիս, եւ ոչ կարելով բաւ առնել բաղձանացս՝ միայնակ ընծայիւ, վասն որոյ զի բոլորապէս թերեւս զներքին եւ զարտաքին սէրն իմ բոլոր իմանացէր Գերամբարձութիւնդ, նմին իրի յղեցի ի կրկին վայելչութիւն անձինդ եւ զմուշտակ մի պատուական եւ սպիտակագոյն, թերեւս զի ի նշան եղիցի մաքուր կենցաղավարութեանդ, զոր ընդունիլ կրկին սիրով՝ աղաչեմ:

ԾԱՆՕԹ. ԽՄԲ.-

Լուչովիկոս Պելլուկա, սպանիացի անուանի հոգեւորական, անունի ամբողջական անուն՝ Luis Antonio Belluga y Moncada (1662-1743), ունեցած է եկեղեցական ու քաղաքական արդիւնաշատ գործունէութիւն, ազդեցիկ դեր խաղալով Սպանիոյ, Ֆրանսայի եւ Աւստրիոյ պետութիւններու փոխ-յարաքերութեանց միջեւ, մնալով միշտ հաւատարիմ պաշտպան ու քառագոյ Պապական իշխանութեան: 1724ին, Ծիրանաւոր ընտրուելով, կը հրաժարի թեմական ու վարչական գործերէ եւ կ'առանձնանայ Հռոմ, ուր կը գործէ մինչեւ մահը (1743), որպէս պաշտպան Սպանիոյ ժողովուրդին: Գրած է բազմաթիւ երկեր՝ կրօնական եւ աստուածաբանական բովանդակութեամբ, թողած է հովուական նամակներ՝ երկու հատորով, ինչպէս նաեւ ձեռագիրներ՝ որոնք կը պահուին Հռոմ ու Մատրիս (իր մասին տե՛ս Enciclopedia Cattolica, հտ. Բ. սիւնակ 1200-1201, տպ. վատիկան 1949):

Այս միեւնոյն Ծիրանաւորն է որ կտակով՝ Աբրահամ Պետրոս Արծիւեան Պատրիարքին նուէր թողած է Աստուածամօր սրբանկար մը, որ ցարդ կը յարգուի Զմմառի վանքին մէջ՝ «Յաւագին Տիրամայր» տիտղոսով:

Կոյուտի այս նամակը, ինչպէս կարելի է հետեւցնել ամոր առաջին մասէն, գրուած է որպէս պատասխան՝ Հռոմէն դրկուած շրջաբերական գրքոյկի մը, որով Հայոց դաւանամքին մասին տեղեկութիւն կը խնդրուէր: Գրքոյկին հետ միասին՝ Կոյուտ իբր նուէր ստացած էր սրբազան Ակար մըն ալ, Պոլսոյ փրանսական դեսպանին՝ Վիլնեովի եւ Ֆ. Ճ. Պոմա Արքեպիսկոպոսին ձեռքով:

Դաւանաբանական մշտնիւր բանաձեւերով ու համամիութեանական ոգիով շաքարուած այս շատ ազնիւ նամակը ունի արժէքաւոր բովանդակութիւն՝ Հայ Եկեղեցւոյ ֆրիստոսաբանական ըմբռնումներուն նկատմամբ, ինչպէս նաեւ Հռոմի Եկեղեցիին ու ամոր Պետին համդէպ տածած իր սիրալիր վերաբերումով:

Կոյուտ, փոխադարձաբար, կը զրկէ գոյգ նուէրներ. գաղատական ընտիր ծիրանի կերպաս եւ սպիտակ մուշտակ մը: